

Կ'աղօթքենք Պէյրութի ժողովուրդին համար

Պէյրութի մէջ երեկուայ ահռելի պայթիւնի լուրը վհատեցուց մեզ ամէնքս: Ահռելի պայթիւնի ամպը տեսնել Լիբանանի մայրաքաղաքի վրայ ցնցող էր, եւ մեր սիրտերը լեցուց այդ քաղաքի բնակիչներու ապրած սարսափով:

Հիմա գիտենք, որ Օգոստոս 4-ի պայթիւնը հողին հաւասարեցուցած է նաւահանգստի մէծ մասը: Լիբանանի Առողջապահութեան Նախարարի նախնական հաշիւներով ունին 100-է աւելի մահ, 4000-է աւելի վիրաւորներ ու 300,000 -է աւելի անտուն մնացածներ: Վստահաբար այս թիւերը դեռ պիտի աճին:

Նորին Սրբութիւն Գարեգին Բ Կաթողիկոսը Հայ Եկեղեցւոյ ցաւակցութիւնը եւ զօրակցութիւնը յայտնած է Լիբանանի ժողովուրդին: Նաեւ Ամենայն Հայոց Հայրապետը Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսի հետ հեռախօսազրոյցի ատեն իր աջակցութիւնն ու զօրակցութիւնը առաջարկած է երկրի հայ համայնքին եւ Անթիլիասի Կաթողիկոսարանին:

Լիբանանի նախագահ Միշել Աունին եւ պետական խորհուրդին ուղղուած նամակով Գարեգին Բ Հայրապետը մխիթարութիւն մաղթած է սգակիր ժողովուրդին եւ պայթիւնի մէջ զոհուածներու ընտանիքներուն: «Կ'աղօթենք, որ Լիբանանի աստուածասէր ժողովուրդը յաղթահարէ այս փորձութիւնը եւ շարունակէ իր կեանքը խաղաղութեամբ եւ արդիւնաւետութեամբ», - ըսած է Գարեգին Վեհափառը:

Ես նոյնպէս առիթը ունեցայ խօսելու Արամ Ա Վեհափառի հետ, որ իր բազմազբաղ օրակարգին մէջ ժամանակ գտաւ ընդունելու մեր թեմի ցաւակցութիւնները: Վեհափառը ներկայացուց Պէյրութի ծայրահեղ ծանր վիճակը եւ յայտնեց, որ հիմնադրամ մը կը հաստատէ՝ տուժած հայ եւ այլ ընտանիքներու օգնութեան համար:

Աւելի կանուխ նաեւ խօսած էի իմ սիրելի հոգեւոր եղբայր Անուշաւան Արք.

Դանիէլեանի հետ՝ մեր Թեմի ցաւակցութիւնը յայտնելու Անթիլիասի

Կաթողիկոսարանին: Սրբազանը տեղեկացուց, որ ցավօք մեր հայրենակիցներէն 12 հոգի զոհուած է, իսկ 40 հոգի վիրաւորուած: Պայթիւնի ալիքը հասած է մինչեւ Անթիլիաս, հինգ մղոն Պէյրութէն հիւսիս՝ իր ճամփուն վրայ փշրելով բոլոր տուններու ապակիները:

Պէյրութի հայկական հաստատութիւններ եւս վնասուած են: Լուրերէն կ'իմանանք, որ վնասուած շէնքերու կարգին են նաեւ Թէքէեան Վարժարանն ու Մշակութային Կեդրոնը, ՀԲԸՄ Տէմիրճեան Կեդրոնը, Պուրճ Համուտի եւ Անթիլիասի եկեղեցական-վարչական շէնքերը:

Մեր հայ եղբայրներու եւ քոյրերու համար, ինչպէս նաեւ Պէրութի ողջ բնակչութեան համար վերջին ամիսները աղէտաբեր եղած են: Այս համաճարակին զուգահեռ, անոնք քաղաքական ու հասարակական տագնապներու մէջ էին: Իսկ հիմա այս սարսափելի աղէտը:

Այս տնօրինութեամբ կը թելադրեմ, որ Արեւելեան Թեմի ծուխերը մասնաւոր աղօթք մատուցեն Լիբանանի ժողովուրդի համար, որ կը փորձէ ապաքինիլ այս ողբերգութենէն:

Կը յանձնարարեմ, որ Ուրբաթ, Օգոստոս 7-ին, ժամը 3-ին բոլոր ծուխերը երեկոյեան ժամերգութիւն կատարեն մեր եկեղեցոյ եւ մեր ժողովուրդի բարօրութեան համար, պայթիւնի զոհերուն հոգիներու հանգստութեան եւ իրենց հարազատներու մխիթարութեան համար, ինչպէս նաեւ Պէրութի եւ անոր շրջակայքի բոլոր բնակիչներու շուտափոյթ ապաքինման համար: Քանի որ դեռ որոշ նահանգներու մէջ մէկտեղ հաւաքուելու արգելքներ կան, կը քաջալերեմ, որ հնարաւորութեան պարագային ժամերգութիւնը առցանց հեռարձակուի:

Նաեւ կը հորդորեմ, որ մեր ամբողջ թեմի ժողովուրդը եւս մասնակից ըլլայ այս աղօթքներուն ուր ալ որ գտնուիք այդ ժամուն: Առաջնորդարանը առցանց հանգանակութիւն պիտի իրականացնէ այս առիթով: Ուրեմն, կը խնդրեմ որ մասնակցիք այս հանգանակութեան: (Առցանց նուիրատութիւն ընելու համար այցելէք [hnu](#)՝ ընտրելով “Beirut Emergency Relief” անունը): Բոլոր նուիրատութիւնները պիտի դրկուին այս նպատակի համար Արամ Ա Վեհափառի կողմէ հաստատուած եւ Կիլիկիոյ Կաթողիկոսարանի կողմէ տնօրինուող հիմնադրամին:

Միեւնոյն ատեն, միասն հայցենք մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմածութիւնը այս քաղաքի վրայ, որ այդքան մեծ կարեւորութիւն ունեցած է հայ ժողովուրդի համար եւ վստահաբար յայտնի է ոչ միայն տառապանքի իր բաժինով:

- Բժշկութիւն տուր Պէրութի ժողովուրդին, Տէր, եւ մեր տագնապած աշխարհին: Սուրբ Պատարագի բառերով. «Ընկա՛լ, կեցո՛ւ եւ ողորմեա՛»:՝

Աղօթարար,

Դանիէլ Եպիսկոպոս

Առաջնորդ